

**Արտահայտման ազատության և ժողովրդավարության դրսևորումները
հայ գրականության մեջ
Ժողովրդավարության որոշ հիմնարար արժեքներ հայ մեծ վիպագիր Մուրացանի
գրական ժառանգության մեջ**

Օ՛, որքան դժվար է մարդ լինելը...

Մուրացան

Հետաքրքիր և որոշ իմաստով պարադոքսալ խնդիր է ժողովրդավարության դրսևորումներ որոնել այնպիսի մի մտածողի մոտ, ով 19-րդ դարի հայ հասարակական կյանքում տեղի ունեցող “արդիականացման” գործընթացներին հակադրում էր իր ռոմանտիկ մղումը դեպի արդար ու մաքուր անցյալն ու հայ քրիստոնյայի ավանդական պարզամիտ կենցաղը: Թվում է, թե ժողովրդավարության դրսևորումներ որոնողը ոչինչ չի գտնի այն գրողի երկերում, ով իր ազգի զարգացման հետ կապված հույսերի ակունքը տեսնում է անցյալում: Սակայն վերոնշյալ խնդիրն իրականացնելի է, քանի որ, ժամանակի գրական որոշ շրջանակներում “ազգային-պահպանողական” համարվող Մուրացանի գործերի նորովի քննությունը ցույց է տալիս, որ որպես համամարդկային բարձրագույն արժեքների կրող և արտահայտիչ նա ավելի ազատամիտ է, քան իրեն “ազատամտական” համարող և ասես ազատամտության դիրքերից Մուրացանին քննադատող “Մշակը” իր քննադատներով հանդերձ¹ : Սրա պատճառը նրանում է, որ ազատամտությունը ոչ մի ընդհանուր բան չունի մոդայիկության հետ, մոդեռն, արդիական երևալու երբեմն արհեստական ձգտումների հետ: Ազատամտությունն ինչ-որ իմաստով վերժամանակյա ստրիբուտ է, քանի որ ազատամիտ կարելի է լինել պատմական ամենատարբեր համատեքստերում: Ընդ որում, հաճախ ստրկամտությունը կամ հաճոյամտությունը հանդես են գալիս զալիս հենց այնտեղ, որտեղ, ըստ սահմանման, պետք է թևածեր ազատամտության ոգին:

¹ Տե՛ս Ս.Սարինյան, Ուղեցույց:// Մուրացան. Հոդվածներ,ուսումնասիրություններ, մահախոսականներ ժողովածուում, Երևան, Ապոլոն, 2004, էջ 5:

Ազատ միտքը երբեմն գտնում է հակասություններ ու անկատարություններ անգամ “ամենաազատամտական” երևույթներում ու արտահայտում դրանք առանց վախենալու: Մուրացանը հենց այսպիսի ազատ մտքերից մեկն է, որ կարողանում է հանգիստ դեմ գնալ ժամանակի տիրապետող մտայնությանը և արտահայտել այն, ինչ մտածում է: Հայ վիպագիրն այս առումով նմանվում է ֆրանսիացի լուսավորիչ փիլիսոփա Ժան Ժակ Ռուսսոյին, որը գտնում էր, որ հասարակության զարգացման առկա ուղին իր հետ բերում է բազմաթիվ վտանգներ: Այն ժամանակ, երբ մյուս լուսավորիչները էյֆորիայի մեջ սպասում էին բանականության թագավորության հաստատմանը, որը նրանց կարծիքով կբերեր համընդհանուր բարօրության և երջանկության, Ռուսսոն ցույց տվեց, որ ամեն ինչ այդքան էլ միանշանակ չէ: Նա նշեց, որ մշակույթի առաջընթացն իր դրական կողմերից զատ մարդկանց մեջ արմատավորում է նաև ծուլություն, վատ բարքեր, տարատեսակ մարմնական և հոգևոր հիվանդագին վիճակներ: Ռուսսոյի համար ցավալի էր ընդունել, որ գիտությունների ու արվեստների զարգացումն իրենց հետ բերում են “բնական” անեղծ ու ներդաշնակ մարդու կորուստ: Նման մի մտահոգություն ենք տեսնում նաև Մուրացանի տարբեր երկերում, որոնցում նա գովերգում է իր համայնքին (գյուղին կամ քաղաքին) նվիրված աշխատավոր մարդուն, որն իր ուժերը տալիս է հանուն համայնքի բարօրության և դրանում էլ տեսնում է իր երջանկությունը: “Ցանկանում եմ ապրել այնպիսի մի տեղ, ուր մարդկանց հետ միասին ապրում է նաև նահապետականությունը, ուր կյանքի պարզության հետ պահպանվում է նաև բարքի մաքրությունը, սրտի անկեղծությունը: Այժմ արդեն պտրում եմ նախկին մարդն ու նրա անխարդախ և, թեկուզ, կիսով չափ վայրենի ընկերակցությունը”, - գրում է Մուրացանը²: Նա ցավով է նկատում, թե ինչպես է հասարակության մեջ ամատավորվում փողի պաշտամունքը և շատանում են “փողի” մարդիկ, ձգտելով դրան ի հակադրություն իր երկերում ցույց տալ “ոգու արժեքների” մարդկանց: Նման մի ձգտում ապրեց նաև արդի արևմտյան հասարակությունը, տեսնելով, որ նյութական ապահովությունն ի վիճակի չէ

² Մուրացան, Խորհրդավոր միանձնուհի, // Երկեր յոթ հատորով, երկրորդ հատոր, Երևան, Հայպետհրատ, 1961, էջ 314:

բերել անդորր և խաղաղեցում, եթե մարդիկ չեն կրում իրենց ներսում որոշ մարդկային, ապրեցնող արժեքներ: Ներկայումս այդ արժեքները երբեմն անվանվում են ժողովրդավարության հիմնարար արժեքներ, երբեմն կոչվում “եվրոպական արժեքներ”, սակայն պետք չէ մոռանալ, որ մարդկության մեծագույն մտածողներն ու իրապես մարդասերները անկախ տարածաշրջանից ու ժամանակաշրջանից հարատևորեն ձգտել են այդ արժեքներին, քանի որ դրանք մարդկայնության արժեքներ են: Մուրացանի, ինչպես և ամեն մի մարդասեր գրողի երկերում տեսնում ենք անդրադարձ ազատությանը, պատասխանատվությանը (նա գերադասում է “պարտք” բառը), դավանանքի ազատությանն ու հանդուրժողականությանը, օրինականությանը, մտքի և արտահայտման ազատությանը, բայց միաժամանակ նաև դրանց որոշ չարաշահումների:

Գլոբալացման արդի գործընթացների համատեքստում իզուր չի լինի հիշատակել, որ Մուրացանի մարդասիրությունը զուգակցվում է ազգասիրության հետ, և նա գտնում է, որ “ամեն մի ազգութիւն իր առանձնայատուկ կուլտուրական գանձը հանդէս պիտի բերի համաշխարհային թատերաբեմում”³: Ինչպես ներկայումս համաշխարհային հանրությունը կենսաբազմազանության կողքին արժևորում է մշակութային բազմազանությունը որպես մարդկության հարստություն և պահպանման կարոտ գոյ, այնպես էլ իր ժամանակին Մուրացանն արժևորում էր հայոց գրաբարյան լեզվի գանձերն ու փորձում դրանք իր երկերում օգտագործելով ու ժամանակի պարբերականներում տպագրելով դարձնել հայ լայն հասարակության սեփականությունը: Զարմանալի է, որ գտնվում էին քննադատներ, որոնք վատաբանում էին նման ազնիվ մի մղում, Մուրացանի “գրաբարաբանությունները” համարելով “լավ տպավորությանը խանգարող”⁴: Մուրացանն ինքն իրեն ամենից առաջ համարում է ոչ թե գրող, այլ հայ գրող. “Հարցնում եք՝ ի՞նչ նպատակ պիտի ունենա հեղինակը և ի՞նչ

³ Արսէն ՏէրՏէրեան, Մուրացանը որպէս մտածող եւ գեղագէտ, “Շողեր”, Տարեգիրք, 1913թ., Մ.Պետերբուրգ:// Մուրացան. Հոդվածներ, ուսումնասիրություններ, մահախոսականներ ժողովածուում, Երևան, Ապոլոն, 2004, էջ 52:

⁴ Մատենագրություն, Մուրացանի “Ռուզան կամ հայրենասեր օրիորդ” դրամայի, “Մշակ”, Թիֆլիս, 1901, #20 // նույն ժողովածուում, էջ 26:

նշանակություն ունի վեպը: Բայց ես կցանկանայի, որ դուք հարցնեիք, թե ի՞նչ նպատակ և ձգտում պիտի ունենա հայ հեղինակը, և ի՞նչ *հոգվով*⁵ հայերի համար պետք է գրել վեպեր և գրույցներ: Չէ՞ որ մենք բախտավոր ազգերի թվին չենք պատկանում և *բացառիկ բախտի ու պայմանների մեջ լինելով՝ բացառիկ էլ նպատակ ու ձգտումներ պիտի ունենանք...*⁶:

Եթե “բախտավոր” պայմաններում գտնվող այլ ազգեր կարող են իրենց թույլ տալ մարդու “փոքրացումը”, միայն շահույթի շարժառիթով առաջնորդվելը, ապա հայերն, ըստ, Մուրացանի պետք է “բացառիկ ձգտումներ ունենան”: Շուկայական տնտեսության բերած համահարթեցմանն ու ամեն ինչ առք ու վաճառքի առարկա դարձնելու գործընթացներին հայ վիպագիրը հակադրում է “ուխտ” անելու, գաղափարին նվիրվելու ռոմանտիկ կարողությունը: Նա մտածում է, որ կան արժեքներ, որոնք չեն չափվում դրամով, գտնվում են մարդկանց հոգիներում ու մղում նրանց գործելու՝ ի հեճուկս օբյեկտիվ տնտեսական օրենքների. “Մեզ նման մի ընկած ազգը չի կարող ոտքի կանգնել, մինչև որ նրա գործողները ուսուցիչ Գարեգինի և քույր Աննայի հոգվով վառված չգործեն”, - ասում է հայ վիպասանը⁷:

Նյութապաշտության ներկա տիրապետության պայմաններում գուցե ոչ պակաս ռոմանտիկ ու նախվ թվա Մուրացանի իդեալները վերակենդանացնելու ամեն մի փորձ, սակայն, ցավոք, կա մի հանգամանք, որ ճշմարիտ էր նրա ժամանակներում, ճշմարիտ է նաև այժմ. մենք ապրում ենք բացառիկ պայմաններում, հետևապես չենք կարող մեզ պահել հեռուստաէկրանին ներկայացված “բախտավոր” ազգերի ներկայացուցիչների պես, որքան էլ գայթակղիչ լինի նրանց օրինակին հետևելը: Ինչ էլ որ անելիս լինենք, մենք պետք է աչքի առաջ ունենանք Հայաստանի բարօրության գաղափարը: *Հավատարմությունը սեփական պետությանը ժողովրդավարական հասարակության քաղաքացու որակներից մեկն է, քանի որ պետականությունը*

⁵ Այսուհետ տեքստում *թեք* տառերով արված են Ս.Պ.-ի ընդգծումները, իսկ **թավ** տառերով ընդգծումները Մուրացանինն են:

⁶ Մուրացան, Ինքնակենսագրություն // Մուրացան, Երկեր, հ. 7, Երևան, “Հայաստան” հրատարակչություն, 1965, էջ 141:

⁷ Նույն տեղում, էջ 140:

չի կարող ծաղկել այնտեղ, որտեղ չկան այդ պետականությանը նվիրված քաղաքացիներ: Իսկ նման հավատարմության մի անգուգական օրինակ հանդես է բերում հենց ինքը՝ Մուրացանը, նյութական անապահովության պայմաններում իր ողջ ուժերը նվիրելով “անձնուրացության դաստիարակության” խնդրին ի հակադրություն տիրապետող անհատապաշտության (Մուրացանի բառով ասած՝ ինքնապաշտության) և սպառողական հոգեբանության: Այն ժամանակ չկար պետականություն, դրա համար ազգային մշակույթն ու եկեղեցին էին հայ վիպագրի հույսը, որոնց բարօրությանը պիտի տաներ անձնուրաց մարդկանց ծառայությունը: Մուրացանը ձգտում է շուկայական տնտեսությունում գերիզոր արդյունահանողների նպատակների իրականացման համար մանրացող և միայն որպես սպառող հանդես եկող “փոքր” մարդուն վառել մեծ գործեր կատարելու “մեծ” հրով, նրանում բորբոքելով “անձնվիրություն և առաքելություն”, ուժ, կամք և սեր: Իսկ “մեծագործություն” նա համարում է, օրինակ, պարզապես հեռավոր մի գյուղ գնալն ու այնտեղ մարդկանց կրթելը (“Խորհրդավոր միանձուհի”):

Մուրացանի վաղ շրջանի գործերից են “Հայ բողոքականի ընտանիքը” և “Իմ կաթոլիկ հարսնացուն” վիպակները, որոնցում հեղինակը ցույց է տալիս, թե կրոնական ծայրահեղականությունն ու մոլեռանդությունը որքան կործանարար կարող են լինել դրանց ենթարկված մարդկանց համար: “Հայ բողոքականի ընտանիքը” վիպակի հերոսը ոսկերիչ Գրիգորն է, որը տարաբախտություն է ունենում ականջ դնել բողոքական քարոզիչ Ավետիքի ճառերին ու տարվել նրանցում հնչած գրավիչ գաղափարներով: Գրիգորը դառնում է բողոքական, թողնելով հայ լուսավորչական դավանանքը: Դրանից հետո նա աստիճանաբար փոխվում է. այլևս հին ընտանեւեր ամուսինը չէ, երեխաներին ու կնոջն իր երջանկությունը համարող մարդը չէ: Կինը աստում է ամուսնուն դավանափոխողներին. “Մի բան, որ անհերքելի իրողություն է մնում հայ կնոջ համար, դա այն է, որ նա յուր նուրբ դիտողությամբ պարզ տեսնում է, թե յուր ընտանյաց այն անդամը, որ տգիտությամբ բռնվում է այդ դների ցանցի մեջ, ընդմիշտ կորչում է յուր ընտանյաց համար: Նա այլևս ամենօրվանը չէ, նրա մեջ սառչում են սովորական զգացմունքները: Հայրական սեր, մայրենի գորով,

հարազատաց խանդաղատանք, այդ բոլորը նրա համար կորցնում են իրանց բարերար ազդեցությունը...”⁸: Թվում է, թե այստեղ խղճի ու դավանանքի ազատության խնդիր է քննվում, ու հանրությունը պետք է, որ առավել հանդուրժողական գտնվեր այլ կերպ մտածողների հանդեպ: Սակայն Մուրացանը վարպետորեն ցույց է տալիս այն մեքենայությունները, որոնք գործ են դնում քարոզիչները միամիտ ու պարզ ուղեղներն ու հոգիները որսալու համար. “Բայց խեղճ մարդիկը չգիտեին, որ այդ անխիղճ մարդորսները հոգևորականաց այդ մեզ անծանոթ պակասությունները անդադար առաջ են բերում միմիայն նորա համար, որ մեր եկեղեցին էլ պակասավոր ցույց տալ կարողանան: Ապա թե ոչ նոցա համար ի՞նչ նշանակություն ունեին մեր հոգևորականաց պակասությունները, որոնք ամեն ազգերի հոգևորականաց մեջ գտնվում են և այն դեռ շատ մեծ չափերով”, - ասում է նա⁹: Ինչևէ: Արդեն իրողություն է, որ Գրիգորը դարձել է լյութերական, սակայն այժմ էլ պարզվում է, որ նա պետք է իր ընտանիքը բերի իր նոր դավանանքի գիրկը: Գրիգորը թույլտվություն է խնդրում պաստորից իմանալու, “թե արդյոք իբրև բացառություն իրեն չի՞ ներվիլ, որ ինքը յուր համար ավետարանական մնա, իսկ իր կնոջը և երեխաներին թույլ տա իրանց մինչև այժմ դավանած կրոնը պաշտելու”: “Հեզոնիան աշակերտներ” քարոզիչները մեր հերոսին հասկացնում են, որ իր անբիծ անվան և պատվի խնդիրը պետք է լինի ընտանիքին “դարձի” բերելը: Սա արդեն իրական ողբերգության սկիզբն է դառնում, քանի որ նախկին լուռ անհամաձայնությունն ու անհանդուրժողականությունն ընտանիքում իրենց տեղը զիջում են անզիջում պայքարի: Ամուսինը պահանջում է, որ կինն ընդունի իր հավատը, այլապես “վշտերն ու խռովությունները կպատեն քեզ և քո բոլոր ընտանիքդ”: Այս վեճի ժամանակ կինը հաշտության քայլ է անում, նա ասում է. “Ես սխալվեցա մինչև այժմ իմ քո դեմ գործածներով, այժմ ես ներողություն եմ խնդրում: Սկսենք դարձյալ հաշտ ու խաղաղ ապրել, սկսենք միմյանց ուրախացնել... Ես մինչև այժմ ընդդեմ էի քո լյութերական լինելուդ և տեսար, թե ունեի իրավացի պատճառներ, բայց այժմ չեմ ընդդիմանում: *Այժմ ազատ կարող ես քո ընտրածդ հավատդ*

⁸ Մուրացան, Հայ բողոքականի ընտանիքը: Մուրացան, Երկեր, հ. 1, էջ 31:

⁹ Նույն տեղում, էջ 34:

պաշտել, ես այլևս քեզ չեմ խանգարիլ, միայն թե դու էլ ինձ ու իմ երեխաներին ազատ թող մեր պապերի հավատը պաշտելու...”: Ընտանիքի անդորրը պահպանել ձգտող կինը ներըմբռնողաբար հասկանում է, որ բախումներից ու հալածվելուց խուսափելու լավագույն ուղին հանդուրժողական լինելն է ու միմյանց ընտրած հավատը ազատորեն դավանելու հնարավորություն ընձեռելը... Սակայն դրդողների կրոնական մոլեռանդությունն ու ամուսնու պատվասիրությունը թույլ չեն տալիս ընտանիքին վերագտնելու կորցրած ներդաշնակությունը: Պատմությունն աղետալի ավարտ է ունենում. Երեք մահ և մեկ ինքնասպանություն... Պատճառը՝ կրոնական մոլեռանդություն, ազատ ընտրության իրավունքի խեղաթյուրում, մեքենայություններ ու, վերջապես, անհանդուրժողականություն... Վեպի ավարտին Մուրացանը ներկայացնում է, թե որքանով ավելի հանդուրժողական գտնվեց “հայ անհիշաչար հոգևորականությունը”, որը “առավ բողոքականության չորրորդ և ավելի թշվառ գոհի մարմինը և ամփոփեց յուր ընտանյաց հանգստարանում”: Այստեղ հարց է մնում, թե արդյո՞ք ինքնասպանություն գործածներին թաղում էին “հանգստարանում”...

Մյուս՝ “Իմ կաթիլիկ հարսնացուն” վիպակում իրադրությունը մի փոքր այլ է. այստեղ հերոսն առաքելական եկեղեցուն է պատկանում, իսկ հերոսուհու ընտանիքը կաթիլիկ է: Սակայն դա չի խանգարում նրանց միմյանց հետ ամուսնանալու մտադրություններին, քանի որ նրանք հասկանում էին “կրոնական համոզմանց և մտերմական բարեկամության մեջ եղած տարբերությունները¹⁰”: Բայց ամեն ինչ հաշտ ու խաղաղ չի ընթանում: Նախ, հայադավանները գտնում էին, որ Մարգարիտան (հերոսուհին) օտար էր, հայ չէր, ուրեմն հայ երիտասարդի ամուսնությունը նրա հետ մի անհաջող ձեռնարկություն էր: Հերոսն այլ կերպ է մտածում. “Ես իսկույն տեսի, որ ինձ շրջապատող ընկերությունը շատ սահմանափակ հասկացողություն ունի կրոնի և ազգության գաղափարները միմյանցից որոշելու համար, ուստի հարկ

¹⁰ Մուրացան, Իմ կաթիլիկ հարսնացուն: Երկեր, հ. 1, էջ 130:

չհամարեցի այդ խնդրի վերա խոսելու”¹¹: Մուրացանը ցույց է տալիս, թե նման պարագայում որքան կարևոր է հանդուրժողական լինելը, քանի որ, ըստ նրա, պատմական ճակատագրի բերումով է, որ տարբեր հայ ընտանիքներ ունեն տարբեր դավանանքներ և պետք է հանդուրժողական լինեն միմյանց նկատմամբ: Իր նման համոզմունքը հայ վիպագիրն արտահայտում է Հովհաննես քահանա Մարանջյանի շուրթերով. “Եթե բախտի բերմունքով նրանք այսօր առանձին են աղոթում, եթե մեկի հոգվո փրկության համար հայ եկեղեցին է բարեխոսում և մյուսի համար կաթոլիկ՝ այստեղ նրանք հանցանք չեն գործում: Իհարկե, ավելի ցանկալի կլիներ, որ ազգով հայ մարդը յուր ազգային եկեղեցին ճանաչեր, յուր հնադարյան ավանդությանց հավատարիմ մնար, յուր եղբայրների հետ միասին միևնույն տաճարում ծնվեր, ապրեր և մեռներ: Բայց քանի որ աշխարհում գոյություն ունի համոզմունքների տարբերությունը, քանի որ բախտի ձախող բերմունքով ազգի կրոնական ամբողջությունը բաժանված է մի քանի մասերի, և դեռևս անձանոթ է աշխարհին այն գերբնական ուժը, որ կարողանար կրոնով միմյանցից տարբեր մասերը մի ակնթարթում միացնել և ի մի ձուլել, *անհրաժեշտ է ուրեմն, որ մենք չհալածենք միմյանց, որ մենք չատենք ու չարհամարհենք իրար*”¹²: Բայց ի տարբերություն հայադավան երիտասարդի և լայնախոհ հայ քահանայի, այլ կերպ են մտածում կաթոլիկ հոգևորականները, դիմելով տարբեր միջոցների, անգամ բանսարկությունների ու կեղծիքների առաջիկա ամուսնությունը խափանելու համար: Մուրացանն իր գաղափարն իրականացնելու համար վիպակն ավարտում է հերոսուհու ինքնասպանությամբ, որն այնքան էլ հասկանալի չէ (թեև իրական կյանքում էլ պատահում են անհասկանալի լուծումներ): Նույն խնդրին երկու գրվածքներում անդրդառնալը պատահական չի եղել. Մուրացանը փորձել է ներկայացնել ծայրահեղ կրոնապաշտության և օտարին, այլը չհանդուրժելու քայքայիչ ազդեցությունը. “Չե՞ն եղել այդպիսի դեպքեր, չե՞ն լինում այսօր էլ: Մի՞ թե հանցանք է, որ ես իմ վեպերում հարվածում եմ կրոնական մոլեռանդությունը. Կարդացեք վեպը և

¹¹ Նույն տեղում, էջ 100:

¹² Նույն տեղում, էջ 139:

կտեսնեք, ա՞յդ է նպատակը, թե՛ ոչ” – բացականչում է Մուրացանը¹³: Ցավոք, ներկայումս էլ աղանդավորական մի շարք խմբերում նկատվում է ծայրահեղ անհանդուրժողականություն, որը նույնպես երբեմն բերում է դրամատիկ հետևանքների:

Իր գեղարվեստական գործերում ներկայացնելով հավատի հարցերում անհանդուրժողականության ավերիչ լինելը, իրական կյանքում Մուրացանը տառապում էր իր գաղափարական հակառակորդների անհանդուրժողականությունից, որի մի մասնավոր օրինակ ինքն էլ ներկայացնում է իր հոդվածներից մեկում. «[Լեոն քննադատականում գրում է – Ս.Պ.] “Երբ մենք կարդում ենք նրա (Մուրացանի) գրվածքների ցուցակը, իմանում ենք, որ նա գրել է և “Իմ կաթոլիկ հարսնացուն” վեպը, կարող ենք թույլ տալ մեզ **առանց նույնիսկ վեպը կարդացած լինելու**, թե՛ ինչ վերաբերմունք պիտի լինի դեպի այդ կաթոլիկը: Միայն այս վերնագիրները՝ “Հայ բողոքականի ընտանիքը”, “Իմ կաթոլիկ հարսնացուն” բավական են ցույց տալու համար, որ մենք գործ ունենք հայ տիրացուական ազգասիրության ներկայացուցիչներից մեկի հետ” Բավական չէ, որ մարդ խիղճ չունենա,-արդեն շարունակում է Մուրացանը,- ամոթից էլ պետք է զուրկ լինի, որ կարողանա նման տողերը հանձնել մամուլին: Արդյոք տեսնվա՞ծ է աշխարհում մի քննադատ, որ վիպասանի գրվածքի միայն վերնագիրը կարդալով, դատաստան անե նրա մասին: Մի՞թե այս չի ապացուցում այն, որ *պարոնը հենց սկզբից ճգնում է նախապաշարել ընթերցողին և տոգորել նրան այն ատելությամբ, որով ինքն է վառված գրողի դեմ*¹⁴: Նման նախապաշարումներից ու ատելությունից դառնացած գրողը “Ռուզանը” և նրա քննադատները” հոդվածում դարձյալ անդրադառնում է հանդուրժողականության և կառուցողական երկխոսության անհրաժեշտության խնդրին: Նա գրում է. “Մեր երկրի հայ մամուլը յուր աշխատակիցներին և ընթերցողներին, կամ, ընդհանուր առմամբ, մտածող հայ հասարակությանը բաժանել է **ականների** և մկրտելով նրանց **ազատամիտ ու պահպանողական, առաջադեմ ու հետադեմ** անուններով՝ հասարակաց է դարձրել այն միտքը թե՛ **երկու հակառակ բանակի մարդիկ**

¹³ Մուրացան, Իմ երկերի քննադատության առթիվ: Մուրացան, Երկեր, հ. 7, էջ 116:

¹⁴ Նույն տեղում:

միննույն ճշմարտությունը դավանել չեն կարող, թե մեկի գտած լավը մյուսը պիտի վատ հռչակե, կամ ցույց տված բարին պիտի ընդունի չարի տեղ: Այդ իսկ պատճառով ես կարծում եմ, անհետացել են ասպարեզից ճշմարիտ քննադատներ և նրանց տեղն անցել զուտ պոլեմիստներ, կամ գրական մարտիկներ, որոնք կոչումն ունենալով այս կամ այն բանակի պատերազմը պատերազմելու, բնականաբար, անկարող պիտի լինեն հակառակորդի պաշտպան կամ փառավորիչ հանդիսանալ՝ նույնիսկ եթե սա արժանի լիներ դրան, կամ դատել ու պարսավել իրենց կուսակցին, եթե նրա գործը պարսավի լիներ արժան

Քննադատը, սակայն, ուրիշ է: Իմ կարծիքով, նրա համար չկա կուսակցություն, չկան բանակներ, ազատամտի կամ պահպանողականի շահեր. Նա ճանաչում է միայն **ազատ ստեղծագործությունը** և սրա **արժանիքը**:Եվ երբ հարկ լինի խոսել, կխոսե արդարությամբ, առանց աչառելու, առանց բարեկամ և հակառակորդ ճանաչելու” [ընդգծումները Մուրացանինն են – Ս.Պ.]¹⁵:

Ուշադրություն դարձնենք Մուրացանի ասածին՝ փորձելով այն վերաձևակերպել: Ուրեմն ստեղծագործությունը պետք է լինի ազատ, իսկ քննադատները պետք է արդարությամբ խոսեն, առանց աչառելու, այսինքն՝ խտրականության: Դրանք և այն ժամանակ էին ցանկալի արժեքներ և այժմ: Ցավոք, ներկայումս նույնպես գաղափարական հանդուրժողականության պակաս կա մեր հասարակությունում, իսկ գաղափարների բազմազանությունը ժողովրդավարական հասարակության հարստություններից է, որը դառնում է զարգացմանը, հիմնախնդիրների շուժման ուղիների որոնմանն ու գտնելուն նպաստող հանգամանք:

“Չհաս է” վիպակում Մուրացանն անդրադառնում է օրենքի գործադրման, օրինականության պահպանման ու օրենքների բարելավումների խնդիրներին, ցավով ներկայացնելով, որ միննույն օրենքը երբեմն գործադրվում է, երբեմն՝ ոչ, ելնելով այն զարձադրողների կամայականություններից: Այստեղ էլ դարձյալ ամուսնության խնդիր կա, որի թույլատրողն ու չթույլատրողն այս անգամ հայ քահանաներն են: Վիպակի հերոսները՝ Պետրոսն ու Աստղիկը, ինչպես

¹⁵ Մուրացան, “Ռուզանը” և նրա քննադատները, Երկեր, հ. 7, էջեր 119-120:

պարզվում է, ազգակցական կապ ունեն վեցերորդ սերնդում: Իսկ ըստ եկեղեցական օրենքի ամուսնությունը թույլատրելու համար ամուսնացողները պետք է յոթ սերունդ (յոթը պորտ) ազգակցություն չունենան: Քահանաներից մեկը՝ տեր Գարեգինը, գտնում է, որ կարելի է անտեսել այդ հանգամանքը, քանի որ նախկինում բազմաթիվ ամուսնություններ են կատարվել անգամ երրորդ սերնդում ազգակցություն ունեցողների միջև: Բայց մյուս քահանաներն ընդդիմանում են. հարմար առիթ կա «ձեռքերը յուղոտելու»: Վիպակի մյուս ուշագրավ հանգամանքները մի կողմ թողնելով նշենք միայն այն, որ օրինականության «կրթոտ» պաշտպանները մեղադրում են Գարեգինին օրենքին չհետևելու մեջ՝ տրամադրված լինելով զիջել միայն համապատասխան «վերաբերմունքի» դեպքում: Պետրոսն իր անփորձության և ուղղամտության պատճառով առանձնապես լավ չի հասկանում Սրբազանի առաջարկը «ամոքել քահանաների սրտերը, մանավանդ բարեկարգչինը, նոր համախոսական թուղթ ստորագրելու»: Իսկ երբ նրան գլխի են գցում, թե խոսքն ինչի մասին է, սրտանց բարկանում է. «Եթե մեր միությունը փողով կարող է **հաս** լինել, ուրեմն առանց փողի էլ նա **հաս** պիտի լինի»: Մեկ այլ պահի Պետրոսը բացականչում է. «Կաշառե՞լ, մի՞ թե դուք այդ բանին ինձ ընդունակ եք համարում», որին հարգելի բարեկարգիչը պատասխանում է. « Այդ բառը շատ կոշտ է հնչում, բայց նրա գործադրությունը ինքնըստինքյան դժվարություններ չէ ներկայացնում. մի՛ խորշեք դուք այդ բառից, ամեն երկրում, ամեն շրջաններում կաշառքը ապրել է. պետք է ցավել, իհարկե, որ նա մուտք է գործում և այն դասակարգի մեջ, որ իսկապես արդարության պաշտպանը պիտի լիներ...»¹⁶: Մուրացանն այստեղ ներկայացնում է, ոչ միայն կաշառք վերցնողների ու կաշառատվություն անել առաջարկողների հոգեբանական նկարագիրը, այլև այն բարոյական խնդիրը, որ ծառանում է երիտասարդ Պետրոսի առաջ. նա դեռ պետք է համակերպվի կաշառք տալու մտքին, որը նրա պես բարոյական մի երիտասարդի համար ցածրացում է նշանակում, բայց նրան հասկացնում են, որ իրենից առաջ շատերն են այդպես խոսել, բայց հետո «կակղել կերել են»: : Ողջ պատումում ցավալի պահերից է այն,

¹⁶ Մուրացան, Չհաս է: Երկեր, հ. 2, էջ 291:

որ Տեր Գարեգինը, “ազնիվ, յուր կոչմանը հավատարիմ և կատարելապես նրան նվիրված մի անձնավորություն, հազվագյուտ քահանա, որ ապրում է միայն իր հոտի բարոյական կարիքները լցուցանելու և նրա ճշմարիտ բարեկեցությանը ծառայելու համար”, նույնպես այն կարծիքին է, որ հարցի լուծման համար փողի կարիք կա: Նա նշում է, որ ինքը դեմ է այդ արատավոր երևույթին, սակայն “գետակը ակունքների մոտ է պղտորված”¹⁷, այսինքն կոռուպցիայի թելերը գնում են դեպի առաջնորդները: Իհարկե, իմանալով իրերի այդ դրության մասին, Տեր Գարեգինն, այնուամենայնիվ մի փորձ է անում օրենքների բարենորոգության ուղղությամբ, նա առաջարկում է վերանայել այս օրենքը, քանի որ այն, ըստ նրա, չի բխում ժողովրդի շահերից: Նա ասում է. “Հրաման արձակողները ապրում են ժողովրդից հեռու և մեծ մասամբ անձանոթ են նրա ներքին դրության:... Բայց մենք, որ ապրում ենք ժողովրդի մեջ, մենք, որ ամեն օր մասնակից ենք նրա տրտմությանն ու ուրախությանը, պարտավոր ենք ավելի մեղմ և զիջանող լինել: Օրենքը մի սուր է, որի մի կողմը բույթ և մյուսը հատու է. եթե մենք ժողովրդի չարը չենք կամենում, ուրեմն պետք է սրի այն կողմովը հարվածենք նրան, որ ցավը զգալի է անում մարմնին, բայց կենդանությունը նվազեցնող արյուն չէ հանում նրանից... Տեսնո՞ւմ եք, թե ինչպես հետզհետե նվազում է ամուսնացող երիտասարդների թիվը.... Ամեն երկրներում հնարներ են մտածում ընտանեկան կյանքի մեջ կենդանություն և ուժ ներշնչելու համար՝ ամուսնությունը դյուրին պայմանների մեջ դնելու. մինչև անգամ կաթոլիկ եկեղեցին, որ հայտնի է յուր ավանդական խստությամբ ամուսնությունը սկսեց թույլատրել երրորդ սերնդից, իսկ մեզ մոտ դեռ նոր են յոթերորդ սերնդի համար հրամաններ խմբագրում...”¹⁸:

Ժողովրդավարության ուսումնասիրվող դրսևորումների տեսանկյունից այստեղ կարևորը տվյալ օրենքի ու դրա առաջարկվող բարեփոխության բովանդակությունը չէ, այլ այն, որ քահանան հնարավոր է համարում Ներսես Շնորհալու ժամանակներից եկած օրենքի *վերանայումն ու ժամանակին հարմարեցումը*: Ցավոք, նրա այս ելույթին ժողովի նախագահը հետևյալ պատասխանն է տալիս. “Այդ բոլորը լավ. այսուամենայնիվ դուք օրինաց

¹⁷ Նույն տեղում, էջ 288:

¹⁸ Նույն տեղում, էջ 280:

հակառակ էք խոսում: Մենք օրենք խմբագրողներ չենք, այլ գործադրողներ”:
Պահպանողական համարվող Մուրացանն այստեղ նկատելիորեն կողմ է
բարեփոխումների, նրա համակրանքը տեր Գարեգինի կողմն է, որն անգամ
օրինակ է բերում կաթոլիկ եկեղեցու բարեփոխումներին ընդառաջ գնալու
օրինակը: Ժողովրդավարության կարևոր հիմքերից է այն սկզբունքը, որ
օրենքները, որոնք տվյալ հասարակությունն իր համար այլևս նպաստավոր չեն
կարող են և պետք է փոփոխվեն, բայց ժողովրդավարության սկզբունքները
պահանջում են, որ օրենքներում փոփոխություններ կատարելը նույնպես պետք է
ունենա ունենա որոշակի կարգ, որը հնարավորություն կտա բացառել
կամայականությունն ու պատեհապաշտությունը: Մուրացանն այս վիպակում իր
հերոսների շուրթերով քննադատում է օրենքի կամայական գործադրման
դեպքերը, ընդունում, որ օրենքները պետք է անհրաժեշտության դեպքում
ենթակա լինեն վերանայման: Բայց մյուս կողմից նա իր հերոսուհու՝ Աստղիկի
շուրթերով ցույց է տալիս, որ հասարակության անդամները պետք է հարգեն
օրենքներն ու հետևեն դրանց: Դա, ըստ էության, օրինապաշտություն է՝
քաղաքացիական հասարակության ներկայացուցի մեկ այլ կարևոր հատկանիշ:
Օրենքների դեմ Պետրոսի ընդվզումին Աստղիկը պատասխանում է . “Չէ, Պետրե,
*հասարակության անտարբերությունը չպետք է խրախուսե մեզ նրա օրենքները
անպատվելու:* Երկյուղած մարդու համար սրբության բեկորները պաշտելի են
նույնիսկ անարժան վայրերում: Մենք պետք է հարգենք հասարակական
օրենքները ոչ թե նրա համար, որ նրանք հասարակությանն են պատկանում, այլ
որովհետև նրանք այդ հասարակությանը բարոյականություն են քարոզում: Այդ
օրենքներին ենք պարտական, որ մարդիկ գազանների հետ չեն ապրում
անտառներում...Այդ օրենքներին ենք պարտական, որ ընտանիքի պատիվը
զենքերով չենք պաշտպանում...”¹⁹: Ցավոք, այս վիպակի ավարտը նույնպես
ողբերգական է. Մուրացանը հարագատ է մնում իր գեղագիտական իդեալին՝
ներկայացնել անսովորն ու անսպասելին, չտալով առօրեկան, սպասելի
լուծումներ:

¹⁹ Նույն տեղում, էջ 305:

Մեկ այլ ոճով է գրված Մուրացանի “Հատուկ թղթակիցը (Գավառացու օրագրից)” պատմվածքը. Այստեղ տեսնում ենք սարկաստիկ գրչով անողորք երգիծաբանի, որը ներկայացնում է ժամանակի վայ-լրագրության կարկառուն մի հերոսի: Պատմությունը նա գրում է մեր հերոսի անունից, երբեմն-երբեմն հանդես բերելով անգրագիտության և դրանից բխող անսպառ ինքնագոհության ուշագրավ նմուշներ: Միայն զարմանալ կարելի է, թե ինչպիսի տաղանդով է Մուրացանը Հակոյի՝ պատմվածքի հերոսի նմաններին ներսից ներկայացնելու համար “ներհայեցողություն” անում: Մեր հերոսը հենց ամենասկզբից հայտարարում է, որ ինքը բախտավոր է, իսկ բախտավորության պատճառն այն է, որ ինքը **թղթակից** է, իհարկե նշում է նաև, որ “առանց պատշաճավոր պատրաստության” է դարձել թղթակից, բայց դա հասարակության կարծիքն է իր մասին. “Իսկ հասարակությունն իրավունք չունի իմ **մասնավոր** կյանքը քննելու”²⁰ : Մուրացանը թեպետ ցույց է տալիս հերոսի անգրագիտությունը մայրենիին տիրապետելու հարցում (նա ամենայն լրջությամբ հավատում է “ետադեմ” քահանայի այն խոսքերին, թե ճակատին գրաբար լեզվով ասում են “գարշապար” ու ոգևորված օգտագործում է այդ բառն իր անդրանիկ “թղթակցությունում”), սակայն նաև ցուցադրում է իր իրավունքներին նրա տեղյակ լինելու, ինչպես նաև իրավունքների ու հասարակության բարիքի որոշ խնդիրներում նրա մեքենայություններ անելու կարողությունը: Հակօն դատողություններ է անում այն մասին, որ մարդն ունի ազատ կամք՝ միանալու այս կամ այն կուսակցությանը, այս կամ այն հոսանքին, քանի որ “հարկավոր է ընտրես մի կուսակցություն, ինչպես ձմեռը հասած ժամանակ վերարկու չունեցողն ընտրում է մի վերարկու”²¹: Հետաքրքրական է, որ այժմ այդ նույն “վերարկուն” “տանիք” է հորջորջվում: Հակօն ընտրում է ազատամիտ “Հնձվորը”. “Բոլոր աշխարհն, ասացի, առաջ է գնում, ես ինչո՞ւ եմ ետ մնում: Վերջին վարսավիրն էլ չի ընդունում, որ իրեն չանվանես առաջադեմ կամ ազատամիտ, մի՞թե կվայելե, որ ինձ նման

²⁰ Մուրացան, Հատուկ թղթակիցը (Գավառացու օրագրից): //”Պատմվածքներ և նովելներ XIX դարի վերջի և XX դարի սկզբի հայ արձակից” ժողովածուում, Երևան, “Լույս” հրատարակչություն, 1986, էջ 152:

²¹ Նույն տեղում, էջ 156:

ինտելիգենտը չպատկանի նույնպես ազատամիտների խմբին”²²: Այստեղ տեսնում ենք Մուրացանի ու մշակականների հակամարտությանը մի գեղարվեստական պատասխան:

Այժմ անդրադառնանք հերոսի անդրանիկ “թղթակցությանը”. Նա տեսել էր , թե ինչպես էին երկու քահանա տաք-տաք վիճաբանել ու հեռացել: Բայց Հակոն իր “հոգվո” աչքերով “տեսավ” թե նրանք ինչպես **“անվայելչաբար կռվեցին** միմյանց հետ և իրար **քիթ ու պռունկ ու գարշապար** ջարդեցին”։ Ապա նա հրավիրում է **“բարձր հոգևոր կառավարության և ոստիկանության լուրջ ուշադրությունը** այդ **անմխիթար երևույթի վրա”**: Ինչ խոսք, տեսնում ենք քաղաքացիական հասարակության ներկայացուցչի ակտիվ մասնակցության մեկ այլ օրինակ. հրավիրել հանրային քաղաքականության պատասխանատուներին առաջացած կամ առկա խնդիրները լուծելու: Ամեն ինչ կլիներ ժողովրդավարական, եթե հիմքը չլիներ կեղծ. Հակոն հնարել էր ծեծ ու կռվի փաստը, իսկ “ազատամիտ” լրագիրն առանց ստուգման այդ “հաղորդագրությունը” տպել էր գավառական լուրերի շարքում: Այստեղ առաջ է գալիս լրագրողի և լրագրի պատասխանատվության հարցը. կարելի՞ է արդյոք չճշտված լուրեր հայտնել ու դրանով իսկ ստեղծել հասարակական կարծիք: Լուրերի միջոցով մարդկանց մտածողության վրա ազդելու մեխանիզմները նոր չեն հայտնագործվել և առ այսօր օգտագործվում են ՋԼՄ-ներում. Հիշենք, թեկուզ, թռչնի, խոզի գրիպների մասին լուրերը (փիլիսոփաներից մեկը սպասում էր, որ հաջորդը ավանակի գրիպն է լինելու, ակնարկելով, որ լուրերը, ներողություն, “էշացնելու” հատկություն ունեն): Հասարակության վրա նման ազդեցության մասին է վկայում նաև Հակոյի պատմության շարունակությունը. “մեղավոր” քահանաներին պատժած գործակալ քահանային հարցնում են, թե նա ինչու է պատժել տեր հայրերին, եթե քննությունը հերքել է ծեծի փաստը, քահանան պատասխանում է. “Ընդուն, որ լրագրումը տպված ա ըլել, թե ծեծել են: Լրագրի խոսքը թողանք, մարդկանց հավատա՞նք, տպած խոսքը սո՞ւտ կլի: “Լուր” ասած բանը նման ա ձյունի կլոնդրակի (գնդակի) (...), որքան շատ ա թոլ ըլում եղ

²² Նույն տեղում:

կլոնորակը, էնքան էլ ձյունը վրան ավելանում ա... Ուրեմն, - եզրակացրեց գործակալը, - մարդիկ չպետք ա ձյունը գնդեն”²³:

Այնուհետև Հակո-ն ներկայացնում է իր լրագրողական “փառապանծ” կենսագրությունը, նշելով. “Իմ հրապարակախոսական գործունեության ընթացքում հետևել եմ միշտ մի ազնիվ սկզբունքի, այն է՝ խոսել ու գրել ճշմարտությունը, և միայն ճշմարտությունը: Բայց իհարկե, ոչ այնպես, ինչպես որ նա կա (այդպես կարող է անել ամեն մի տիրացու), այլ այնպես, ինչպես որ պիտի լինի, որովհետև այդ է պահանջում կուսակցական ճշմարտասիրության էտիկան”²⁴: Մուրացանն այստեղ քննադատում է նեղ կուսակցականությունը:

Հետագոտվող պատմվածքում տեսնում ենք ժողովրդավարության որոշ արտահայտություններ, որոնք Մուրացանն իր հերոսի շուրթերով անվանում է “ժողովրդական ոգու արտադրություններ”: Նա գրում է. “Հայոց ազգն ունի նաև հոգևոր դպրանոցներ, որոնց մեջ դասախոսում են վարժապետներ, իսկ վարժապետներին ընտրում է տեսուչը, տեսչին հոգաբարձուները, հոգաբարձուներին ժողովուրդը, իսկ ժողովուրդին... հա՛, ներողություն, դենը ճանապարհ չկա: Հայոց ազգն ունի հոգևոր ատյաններ, որոնք կառավարվում են անդամներով, իսկ անդամներին կառավարում է առաջնորդը, առաջնորդին կաթողիկոսը, կաթողիկոսին... Այստեղ էլ, կարծեմ, ճանապարհը փակ է, բայց սազում է, որ ասեի “իսկ կաթողիկոսին՝ ժողովուրդը”: “Ժողովրդական ոգի” ունեցող այս հաստատություններում է, որ գործում է մեր “հատուկ թղթակիցը”: Նա մտնում է հանրային կարծիքով առաջնորդվող այդ “տեղերն ու հաստատություններն” ու չարաշահում իրեն տրված, այսօրվա բառերով ասած, չորրորդ իշխանությունը: Նա մանիպուլյացիաներ է անում հասարակական կարծիքի հետ՝ կախված այն բանից, թե որ կողմն է իրեն վճարել, ում է անձամբ համակրում, ինչ տարատեսակ շահեր ունի տվյալ գործում: Մուրացանը վարպետորեն ցույց է տալիս, թե ինչպես է Հակոն օգտագործում իր հատուկ թղթակցությունը: Սա ժողովրդավարացման գործընթացների մի դրական քննադատություն է, որն ընթերցողներին հնարավորություն է տալիս արագ

²³ Նույն տեղում, էջ 161:

²⁴ Նույն տեղում, էջ 169:

հասկանալ նման մանիպուլյատիվ մեխանիզմներ օգտագործողների հոգեբանությունը, բացահայտում է ժողովրդավարության հաստատման դժվարություններն ու այդ ընթացքում պատեհապաշտների կողմից մարդկային թուլությունների օգտագործման հնարավորությունները: Որպես ազգասեր ու մարդասեր, Մուրացանը չէր կարող չնկատել նկարագրված գործընթացներում առկա բացերը, սակայն նա նույնպես, թեպետ և անխնա քննադատելով, հանդես է գալիս լրագրելում, ձգտում է ձևավորել հասարակական կարծիք ու իր անձնուրաց գրական ծառայությամբ փորձում է ազդել հասարակության անդամների հոգեկերտվածքի, մտագործելակերպի վրա. Իսկ նման գործունեությունն իր բնույթով ունի “ժողովրդական ոգի”: